«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ և «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ օրենքի նախագծեր

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ոստիկանությունում ծառայության մասին» 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-401-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 3-րդ գլխի վերնագիրը լրացնել «**ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ**» բառերով:

Հոդված 2. Օրենքի 13-րդ հոդվածում՝

1. 8-րդ մասից «Սույն մասի պահանջները չեն տարածվում սույն օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությամբ սահմանված կարգով պաշտոնի նշանակելու դեպքերի վրա» նախադասությունը հանել:

2. Ուժը կորցրած ճանաչել 10-րդ մասը:

Հոդված 3. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունը և 11-րդ մասը:

Հոդված 4. Օրենքի 15-րդ հոդվածը շարարդրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«Հոդված 15. Ոստիկանության ծառայողների ատեստավորումը

1.Ոստիկանության ծառայողների ատեստավորումն անցկացվում է՝

1) հավելավճար հաշվարկելու նպատակով,

2) ոստիկանությունում զբաղեցրած պաշտոնին համարժեք կամ առաջխաղացման կարգով այլ պաշտոնի նշանակվելու և այդ պաշտոնին

համապատասխանող հավելավճար հաշվարկելու նպատակով:

2. Ոստիկանության ծառայողի ցանկությամբ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված ատեստավորմանը կարող է նախորդել նրա վերապատրաստումը: Ոստիկանության ծառայողը իրավունք ունի ընտրելու վերապատրաստման արդյունքներով ատեստավորումը սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված ժամկետի ընթացքում մեկ անգամ:

3. Ոստիկանությունում զբաղեցրած պաշտոնին համարժեք կամ առաջխաղացման կարգով այլ պաշտոնի նշանակվելու համար ոստիկանության ծառայողի ատեստավորումն իրականացվում է վերապատրաստման արդյունքներով: Հաստիքների կրճատման, ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման դեպքում՝ ոստիկանությունում այլ պաշտոնի նշանակվելիս, այդ թվում՝ պաշտոնի մեկ աստիճանով իջեցման դեպքում, ինչպես նաև ծառայության այլ վայր միևնույն պաշտոնի փոխադրվող ոստիկանության ծառայողները ատեստավորման ենթակա չեն, բացառությամբ սույն հոդվածի 8-րդ կետով նախատեսված ժամկետը լրանալու դեպքերի:

4. Ատեստավորման կարգը սահմանվում է Կառավարության որոշմամբ:

5. Ատեստավորման անցկացման նպատակով լիազոր մարմնի ղեկավարի հրամանով ստեղծվում է ատեստավորման հանձնաժողով (հանձնաժողովներ):

6. Ոստիկանությունում առաջին անգամ պաշտոնի նշանակված ծառայողը կարող է ատեստավորում անցնել պաշտոնի նշանակվելուց ոչ շուտ, քան վեց ամիս անց: Նա պարտավոր է սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված ատեստավորման համար դիմել վեցամսյա ժամկետը լրանալուց հետո երեք տարվա ընթացքում:

7. Ատեստավորման (վերաատեստավորման) արդյունքներով հավելավճար ստանալու իրավունք ձեռք բերելու դեպքում հավելավճարը հաշվարկվում է այդ իրավունքի ձեռքբերման օրվանից:

8. Համապատասխան պաշտոնում ատեստավորված և տվյալ պաշտոնի խմբի համար սահմանված չափով հավելավճար ստացող ոստիկանության ծառայողները ենթակա են ատեստավորման յուրաքանչյուր հինգ տարի վեց ամիսը մեկ անգամ՝ հավելավճարի հաշվարկումը շարունակելու համար: Հավելավճարի հաշվարկումը շարունակելու նպատակով ատեստավորման համար դիմելու իրավունքը ոստիկանության ծառայողի մոտ ծագում է նախորդ ատեստավորման արդյունքներով հավելավճար հաշվարկելու իրավունքը ձեռք բերելու օրվանից չորս տարի հետո:

9. Հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում գտնվող ոստիկանության ծառայողը ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան արձակուրդից վերադառնալուց երեք ամիս հետո: Սույն մասով նախատեսված ոստիկանության ծառայողները պարտավոր են ատեստավորման համար դիմել եռամսյա ժամկետի ավարտից հետո երեք տարվա ընթացքում:

10. Եթե ոստիկանության ծառայողը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ատեստավորման արդյունքներով ստացել է սույն հոդվածի 12-րդ մասի 1-ին կամ 2-րդ կետով նախատեսված եզրակացությունը, որից հետո նրան տրամադրվել է հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդ, ապա հավելավճարի հաշվարկման ժամկետը արձակուրդի ժամանակահատվածում կասեցվում է: Այն վերսկսվում է նշված տեսակի արձակուրդից վերադառնալու օրը:

11. Ատեստավորման ենթակա ոստիկանության ծառայողն ատեստավորման օրվանից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ տեղեկացվում է ատեստավորման անցկացման ժամկետի մասին:

12. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված ատեստավորման արդյունքներով կայացվում է հետևյալ եզրակացություններից որևէ մեկը՝

1) ենթակա է հավելավճար հաշվարկելու.

2) ենթակա է շարունակելու հավելավճարի հաշվարկումը.

3) ենթակա չէ հավելավճար հաշվարկելու.

4) ենթակա չէ շարունակելու հավելավճարի հաշվարկումը:

13. Ատեստավորում անցած այն ծառայողները, որոնց վերաբերյալ կայացվել է սույն հոդվածի 12-րդ մասի 3-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված եզրակացությունը, դրան ծանոթանալու պահից երեք տարվա ընթացքումունեն առավելագույնը երկու վերաատեստավորման հնարավորություն՝ համաձայն լիազոր մարմնի ղեկավարի կողմից հաստատված ժամանակացույցի:

14. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ատեստավորման արդյունքներով կայացվում է հետևյալ եզրակացություններից որևէ մեկը՝

1) ենթակա է ոստիկանությունում զբաղեցրած պաշտոնին համարժեք կամ առաջխաղացման կարգով այլ պաշտոնի նշանակվելու և նոր պաշտոնին համապատասխանող հավելավճար հաշվարկելու.

2) ենթակա չէ ոստիկանությունում զբաղեցրած պաշտոնին համարժեք կամ առաջխաղացման կարգով այլ պաշտոնի նշանակվելու և նոր պաշտոնին համապատասխանող հավելավճար հաշվարկելու:

15. Սույն հոդվածի 12-րդ և 14-րդ մասերով նախատեսված եզրակացությունները հաստատվում են տվյալ ոստիկանության ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հրամանով:

16.Ատեստավորում անցած այն ծառայողները, որոնց վերաբերյալ կայացվել է սույն հոդվածի 14-րդ մասի 2-րդ կետով նախատեսված եզրակացությունը, շարունակում են պաշտոնավարել իրենց պաշտոններում՝ այդ պաշտոնների համար ստացած հավելավճարի պահպանմամբ: Նշված ծառայողները սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ատեստավորման համար

կարող են կրկին դիմել ոչ շուտ, քան եզրակացությանը ծանոթանալու պահից մեկ տարի հետո:

17. Ոստիկանության ծառայողը պարտադիր ծանոթացվում է ատեստավորման արդյունքներին և կայացված եզրակացությանը:

18. Հավելավճար ստացող ոստիկանության ծառայողներին հաշվարկված հավելավճարի վճարումը դադարում է սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ատեստավորման արդյունքներով ոստիկանությունում զբաղեցրած պաշտոնին համարժեք կամ առաջխաղացման կարգով այլ պաշտոնի նշանակվելիս՝ այդ պաշտոնին համապատասխանող հավելավճար հաշվարկելով:

19. Ատեստավորման արդյունքներով հաշվարկվող հավելավճարի չափերը և վճարման կարգը սահմանվում են Կառավարության որոշմամբ: Սույն հոդվածի համաձայն հավելավճար հաշվարկվելու դեպքում ոստիկանության ծառայողներին «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոն-ներ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված լրավճարը և զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների համար նախատեսված հավելումները չեն հաշվարկվում»:

Հոդված 5. Օրենքի 16-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4.1.-ին մասով՝

«4.1. Ոստիկանության այն ծառայություններում, որոնցում ծառայողների անձը ծածկագրված է, և նրանք իրենց լիազորություններն իրականացնում են գաղտնագործունեության լիակատար պահպանմամբ, վերապատրաստման կարգը և պայմանները սահմանում է Լիազոր մարմնի ղեկավարը:»:

Հոդված 6. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«1) ծառայության այլ վայր միևնույն պաշտոնին՝ ոստիկանության տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո, կրտսեր խմբի պաշտոն զբաղեցնող ծառայողների փոխադրման դեպքում՝ առնվազն վեց ամիս ծառայելուց հետո, իսկ Ոստիկանության պետի որոշմամբ՝ մինչև սահմանված ժամկետները լրանալը.»:

2) Ուժը կորցրած ճանաչել 4-րդ կետը:

Հոդված 7. Օրենքի 40-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 4-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով:

2) 1-ին մասը լրացնել հետևյալ խմբագրությամբ 5-րդ կետով՝

«5) սույն օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով նախատեսված հիմքով ոստիկանությունում ծառայությունից ազատվելու դեպքում:»:

Հոդված 8. Օրենքի 45-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 12-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով:

2) 1-ին մասը լրացնել հետևյալ խմբագրությամբ 13-րդ կետով՝

«13) սույն օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ, 8-րդ կամ 9-րդ մասերով նախատեսված ժամկետներում սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված ատեստավորման համար չդիմելու դեպքում կամ սույն օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ կետով նախատեսված ժամկետում վերաատեստավորման համար չդիմելու դեպքում կամ վերաատեստավորման արդյունքում սույն օրենքի 15-րդ հոդվածի 12-րդ մասի 3-րդ կետով նախատեսված եզրակացություն կայացնելու դեպքում»:

3) Հոդվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ 4-րդ մասով՝

«4. Ոստիկանության ծառայողները (բացառությամբ լիազոր մարմնի ուսումնական հաստատություններում սովորողը, այդ թվում՝ լիազոր մարմնի կողմից այլ ուսումնական հաստատություններ գործուղվածը) ազատվում են ոստիկանությունում ծառայությունից սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով (այդ թվում՝ սույն օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով) նախատեսված ատեստավորման համար ոչ ուշ, քան երեք տարվա ընթացքում չդիմելու դեպքում»:

Հոդված 9. Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «ատեստավորման արդյունքների հիման վրա,» բառերը հանել:

Հոդված 10. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի ապրիլի 1-ից:

2. Ոստիկանության այն ծառայողները, ովքեր ցանկություն են հայտնել սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված ատեստավորումը անցել վերապատրաստման արդյունքներով, այդ իրավունքը կարող են իրականացնել 2024 թվականի հունվարի 1-ից հետո՝ լիազոր մարմնի ղեկավարի կողմից հաստատված ժամանակացույցի համաձայն:

3. Ոստիկանության ծառայողները (բացառությամբ լիազոր մարմնի ուսումնական հաստատություններում սովորողը, այդ թվում՝ լիազոր մարմնի կողմից այլ ուսումնական հաստատություններ գործուղվածը) պարտավոր են դիմել սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով (այդ թվում՝ սույն օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով) նախատեսված ատեստավորման համար սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ, քան երեք տարվա ընթացքում:

4. Ոստիկանության գործող կառուցվածքում ներառված, սակայն Ներքին գործերի նախարարության ձևավորումից հետո գործունեությունը դադարեցվող հիմնական և աջակցող ստորաբաժանումների ծառայողների ցանկը, ովքեր ենթակա չեն ատեստավորման, սահմանվում է Լիազոր մարմնի ղեկավարի հրամանով:

5. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ընդունվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետը «զինծառայողների» բառից հետո լրացնել «, ինչպես նաև ոստիկանության ծառայողների» բառերով:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի 6.1-ին մասը «զինծառայողներին» բառից հետո լրացնել «, ինչպես նաև ոստիկանության ծառայողների» բառերով:

Հոդված 3. Օրենքի 16-րդ հոդվածի 5.1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5.1. Մարտական խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինվորական ծառայության սպայական, ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողներին, ինչպես նաև ոստիկանության ծառայողներին ատեստավորման արդյունքներով որակավորման համար տրվում է հավելավճար, որի չափերը և վճարման կարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Սույն մասով սահմանված հավելավճար հաշվարկելու դեպքում պայմանագրային զինվորական ծառայության սպայական, ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության մարմիններում պետական սահմանի պահպանության կամ հետախուզական կամ հակահետախուզական կամ օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման կամ հատուկ առաջադրանքների կատարման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող զինվորական ծառայության պաշտոններ զբաղեցնողներին (բացառությամբ բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների) սույն օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված լրավճարը և զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների համար նախատեսված հավելումները չեն հաշվարկվում:»:

Հոդված 4. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի ապրիլի 1-ից։

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում։